

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 3**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ**  
**ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

**Կայացած՝ 24-ը դեկտեմբերի 2021 թվական**

**քաղաք Գյումրի**

2021 թվականի դեկտեմբերի 24-ին, ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզի թվով 6 համայնքների ղեկավարները, Նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզի իրավապահ մարմինների ղեկավարներ,
- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետեր,
- պետական կառավարման մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ,
- գորակոչային և գորահավաքային համալրման, փրկարարական ծառայությունների ու տեսչական մարմինների ղեկավարներ,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի հետևյալ նախագիծը՝

**1. ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2021 թվականին կատարված աշխատանքների մասին:**

Զեկուցողներ՝

- |                     |   |   |
|---------------------|---|---|
| Լիպարիտ Մարտիրոսյան | - | Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,               |
| Արամ Անտոնյան       | - | ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ,   |
| Լեյլի Ասլանյան      | - | առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին փոխարինող, |
| Կարեն Բաղիշյան      | - | զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ:         |

**2. Հայտարարություններ**

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Մինչ օրակարգային հարցերի քննարկումը մարզպետը նշեց, որ Շիրակի մարզում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ՝ 2021 թվականի հոկտեմբերի 17-ին Գյումրի համայնքում, իսկ դեկտեմբերի 5-ին՝ Արթիկ, Ախուրյան Ամասիա, Աշոցք համայնքներում, որի արդյունքում ընտրվել են նոր համայնքների ղեկավարներ և բոլորին մաղթեց բեղմնավոր աշխատանք ի նպաստ Հայաստանի Հանրապետության:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

**ԼՄԵՑԻՆ 1. Մարզի համայնքների 2021 թվականի բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան*

**(Ձեկույցը կցվում է):**

Այնուհետև մարզպետը նշեց, որ համայնքների սեփական եկամուտների կատարումը օրենքով համայնքների ղեկավարների ուղիղ պարտականությունն է, իսկ թվերի ուսումնասիրությունը փաստել են, որ մարզի որոշ համայնքապետեր թերացել են իրենց աշխատանքներում, միաժամանակ ավելացրեց, որ հետայսու այս հարցում չափազանց հետևողական ենք լինելու և նույն կերպ պետք է աշխատեն նաև համայնքների նորընտիր ղեկավարները:

Թվերի ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնական թերացումները վերաբերում են վարձակալական վճարների ապահովման աշխատանքներին, նաև տեղեկացրեց, որ վարձակալական պայմանագրերում առկա են գանձման մեխանիզմներ: Մարզպետը հետաքրքրվեց, թե համայնքների ղեկավարներն արդյոք դիմել են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը, ինչն օրենքով ամրագրված է, միաժամանակ ավելացրեց, որ հետայսու մարզի համայնքների սեփական եկամուտների կատարման ցուցանիշներին կձանոթանան ամեն ամիս, իսկ մարզխորհրդի նիստում անհրաժեշտ գնահատականեր կտրվեն իրենց աշխատանքներում թերացող համայնքների ղեկավարներին:

Նաև նշեց, որ համայնքների միավորումը բերելու է նոր աշխատանքային ձևաչափի և վստահություն հայտնեց, որ տեղերում նշանակվելու են այնպիսի վարչական ղեկավարներ, որոնք կկարողանան պատշաճ իրականացնել իրենց պարտականությունները:

Մարզպետը սեփական եկամուտների ցածր կատարողականներ ունեցող համայնքների ղեկավարներին մեկ անգամ ևս հորդորեց՝ միջոցներ ձեռնարկել մինչև ընթացիկ տարվա ավարտը սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

**ԼՄԵՑԻՆ 2. ՀՀ Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության կողմից 2021 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան*

**(Զեկույցը կցվում է):**

Մարզպետը նշեց, որ այս փուլում շատ կարևոր է ՏԻ և ՀԳՄՀ վարչության դերակատարումը, քանի որ մարզի համայնքներում տեղի է ունեցել միավորման գործընթաց և անհրաժեշտ է, որ վարչության կողմից նորընտիր համայնքների ղեկավարներին ցուցաբերվի մեթոդական և իրավական աջակցություն՝ այս անցումային փուլում համայնքների վերակազմակերպման աշխատանքներն անցնում իրականացնելու համար:

Միաժամանակ կարևորեց ավագանու ինստիտուտի կայացման հարցը և նշեց որ 2022 թվականից սկսած մարզխորհրդի նիստերին հրավիրվելու են նաև համայնքների ավագանիների խմբակցությունների ղեկավարները, միաժամանակ հորդորեց համայնքների ղեկավարներին՝ ավագանիների ինստիտուտի կայացման հարցում լինել առավել հետևողական ու հաշվետվողական:

Մարզպետը շնորհակալություն հայտնեց մարզի իրավապահ համակարգի աշխատողներին՝ պատասխանատու աշխատանքի համար և շեշտեց, որ դրա արդյունքում է հնարավոր եղել մարզի համայնքների միավորման գործընթացը կազմակերպել անցնում, խոսեց նաև նոր քաղաքական մշակույթի ձևավորման մասին:

**ԼՄԵՑԻՆ 3. 2021 թվականի առաջին կիսամյակում մարզի առողջապահության ոլորտում կատարված աշխատանքների մասին:**

*Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող՝ Լեյլի Ասլանյան*

**(Զեկույցը կցվում է):**

Մարզպետն իր խոսքում մարզի պատվաստման ցուցանիշները համարեց ոչ բավարար և համայնքների ղեկավարներին հորդորեց այս գործընթացում աջակցել առողջապահության համակարգին, լինել առավել զգոն, ներկայացրեց պատվաստման գործընթացի փոփոխությունը և մասնավորապես շեշտեց, որ այն քաղաքացիները ովքեր 2 դեղաչափով պատվաստվել են՝ 6 ամիսը լրանալուն պես կարող են 3-րդ դեղաչափով պատվաստվել, նաև նշեց, որ այլ երկրներում քննարկվում են 4-րդ դեղաչափով պատվաստվելու հարցը:

Այնուհետև հետաքրքրվեց, թե որքան սոցիալական աջակցության դիմումներ են ստացվել ՀՀ Շիրակի մարզպետարանում և նշեց, որ 2022 թվականից լինելու է սոցիալական աջակցության տրամադրման նոր կարգ և շեշտեց, որ միջոցներ են ձեռնարկվում մարզի համայնքների ղեկավարների հետ ընդհանուր բազա ստեղծելու ուղղությամբ, այն հաշվով որպեսզի քաղաքացին սոցիալական աջակցություն ստանալու հարցով դիմում ներկայացնի կամ մարզպետարան կամ համայնքապետարան:

**ԼՄԵՑԻՆ 4. 2021 թվականին ՀՀ Շիրակի մարզի համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման վերաբյալ**

*Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բաղիշյան*

**(Զեկույցը կցվում է):**

Մարզպետը տեղեկացրեց, որ եղել են համայնքներ որոնց ֆոնդային բյուջեները չեն բավարարել հաստատված սուբվենցիոն ծրագրերն իրենց տրամաբանական ավարտին հասցնելու համար: Նա մարզի համայնքների նորընտիր ղեկավարներին հորդորեց աչալուրջ լինել և այս խնդիրը պահել ուշադրության կենտրոնում և որպես իրավահաջորդ ավարտին հասցնել դեռևս ամբողջապես չավարտված սուբվենցիոն ծրագրերը:

Այնուհետև մարզպետը կարևորեց համայնքներում կարիքների գնահատման ուղղությամբ գույքագրման աշխատանքների իրականացումը, քանի որ ներդրումային ծրագրերն ու պետության հրատապ միջոցները բաշխվելու են ոչ թե հայեցողությամբ այլ՝ հիմնավորված և փաստաթղթային:

## **2. Հայտարարություններ**

Զեկուցումների ավարտից հետո հայտարարությամբ հանդես եկավ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետ Տիգրան Ղազարյանը:

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետն անդրադարձավ ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ինքնակամ կառույցների հաշվառման և օրինականացման վերաբերյալ օրենսդրական փաթեթին, ներկայացրեց ինքնակամ կառույցների հաշվառման և օրինականացման հետագա ընթացակարգը, միաժամանակ առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ անհրաժեշտ հսկողություն իրականացնել մարզի համայնքներում ինքնակամ շինարարության դեպքերը հետայսու բացառելու ուղղությամբ:

ՀՀ Շիրակի մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՆԱԶԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*ԱՐԶԱՆԱԳԼԵՑ՝ Արման Մելքոնյանը*